ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

№ 30/59-Լ «15» 02 2022

ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂԻ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԸՆԹԵՐՑՈՂԻ
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ

Նպատակ ունենալով արդիականացնելու ԵՊՀ ուսանողներին տրվող ուսանողական տոմսերի (ուսանողական և գրադարանի միասնական տոմս) համակարգը, բարձրացնելու համապատասխան գործընթացների արդյունավետությունը, ապահովելու նշված տոմսերի արդիականացումն ու պատշաճ արտաքին ձևավորումը՝ հրամայում եմ.

1. ԵՊՀ ուսանողի կարգավիճակ ստանալուց հետո ուսանողին անվճար տրամադրել ԵՊՀ ուսանողի և ԵՊՀ գրադարանի ընթերցողի կարգավիճակը հավաստող փաստաթուղթ՝ միասնական տոմս (այսուհետ՝ ուսանողական տոմս):
2. Սահմանել, որ ուսանողական տոմսում նշվում է հետևյալ տեղեկատվությունը՝ ազգանուն, անուն, հայրանուն, ֆակուլտետը, կրթական աստիճանը (բակալավրիատ, մագիստրատուրա), ուսանողական տոմսի համարը, ուսանողի լուսանկարը, տրման և վավերականության ժամկետը, ԵՊՀ գրադարանի ընթերցողի տոմսի համարը և գծիկային կոդը, ուսանողի էլեկտրոնային փոստի հասցեն, գրադարանի քարտարանի հասցեն, տեղեկատվություն համալսարանի մասին. ուսանողական տոմսի չափսերն են՝ 850x530 մմ, տոմսը պլաստիկից է: Ուսանողական տոմսում կարող է ներառվել նաև այլ տեղեկատվություն: Ուսանողական տոմսը ստորագրվում է ԵՊՀ ռեկտորի կողմից: Ուսանողական տոմսն ուսանողներին հանձնում են ֆակուլտետների դեկանները (կենտրոնների տնօրենները):
3. Հաստատել ուսանողական տոմսի նմուշը՝ ըստ հավելված 1-ի:

4. Հաստատել ԵՊՀ ուսանողի և գրադարանի ընթերցողի միասնական տոմսի պատրաստման և հանձման ընթացակարգը՝ ըստ հավելված 2-ի:

5. Հանձնարարել ԵՊՀ գրադարանի տնօրենին մինչև տվյալ տարվա սեպտեմբերի 1-ը իրականացնել բակալավրիատի առաջին կուրսի ուսանողների ուսանողական տոմսերի պատրաստման աշխատանքները: Մագիստրատուրայի ուսանողների տոմսերի պատրաստումը կատարել տվյալների մուտքագրումից հետո՝ հնարավոր սեղմ ժամկետներում:

6. Հանձնարարել ԵՊՀ տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչության պետին աջակցել համապատասխան տեղեկատվական համակարգերի (բազաների) միջև տվյալների ավտոմատ փոխանակման և տեղեկատվության անվտանգության ապահովման խնդիրների լուծման աշխատանքներին:

7. Հանձնարարել ԵՊՀ ֆակուլտետների դեկաններին և ուսուցում իրականացնող կենտրոնների տնօրեններին իրականացնել համապատասխան աշխատանքներ՝ ԵՊՀ ուսանողի և գրադարանի ընթերցողի միասնական տոմսի պատրաստման և հանձնման ընթացակարգի համաձայն:

8. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և անվավեր է ճանաչվում «ԵՊՀ ուսանողի և գրադարանի ընթերցողի միասնական տոմսերի ներդնելու և օգտագործելու մասին» ԵՊՀ ռեկտորի հրամանը:

ԵՊՀ ռեկտոր՝ Հ. Հովհաննիսյան

Հավելված 1

ԵՊՀ ուսանողի և գրադարանի

ընթերցողի միասնական

տոմսերի մասին

«15» 02 2022թ. N30/59-2 ԵՊՀ ռեկտորի հրամանի

ԵՊՀ ուսանողի և գրադարանի ընթերցողի միասնական տոմսի նմուշ





Հավելված 2

ԵՊՀ ուսանողի և գրադարանի
ընթերցողի միասնական
տոմսերի մասին
«15» 02 2022թ. N30/59-2 ԵՊՀ ռեկտորի հրամանի

ԵՊՀ ուսանողի և գրադարանի ընթերցողի միասնական
տոմսի պատրաստման և հանձման ընթացակարգ

1. ԵՊՀ գրադարանն ապահովում է համապատասխան ուսանողական տոմսերի տպագրությունը և ուսանողական տոմսերը դրանց ստացման մատյանների հետ փոխանցում է համապատասխան ֆակուլտետներին (կենտրոններին):

2. ԵՊՀ ուսումնամեթոդական վարչությունն ապահովում է ուսանողի տվյալների շտեմարանում առկա ուսանողական տոմսերի պատրաստման և գրադարանի ընթերցողների տվյալների բազայի վարման համար անհրաժեշտ տվյալների (տեղեկատվության) տրամադրումը և համապատասխան շտեմարանի հասանելիությունը:

3. ԵՊՀ տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչությունն ապահովում է տվյալ տարի ԵՊՀ ընդունվածների էլեկտրոնային փոստի հասցեների տրամադրումը: Բակալավրիատի ուսանողների դեպքում մինչև տվյալ տարվա օգոստոսի 20-ը, մագիստրատուրայի դեպքում՝ հնարավոր սեղմ ժամկետներում:

4. ԵՊՀ ֆակուլտետներն ապահովում են տվյալների բազաներում ուսանողների տվյալների (ծննդյան ամսաթիվ, մագիստրատուրայի ուսանողների լուսանկարների և այլն) մուտքագրումը և հսկումը: Բակալավրիատի ուսանողների դեպքում մինչև տվյալ տարվա օգոստոսի 20-ը, մագիստրատուրայի դեպքում՝ հնարավոր սեղմ ժամկետներում:

5. ԵՊՀ գրադարանը տվյալների հիման վրա պատրաստում է ուսանողական տոմսերը և փոխանցում է համապատասխան ֆակուլտետներին (կենտրոններին):

6. Ուսանողական տոմսը ստանալիս ուսանողն ստորագրում է համապատասխան մատյանում: Ուսանողական տոմսի վավերականության ժամկետը լրանալուց հետո համապատասխան կարգավիճակը պահպանելու դեպքում՝ ուսանողին անվճար տրամադրվում է նոր ուսանողական տոմս:

7. Ուսանողական տոմսը կորցնելու դեպքում ուսանողը պարտավոր է անհապաղ տեղեկացնել գրադարանի աբոնեմենտի բաժնին: Նոր տոմսը տրամադրվում է 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ վճարովի հիմունքներով:

Կորցրած տոմսը վերականգնելու կամ վնասված տոմսը փոխարինելու համար ուսանողը դիմում է ներկայացնում ԵՊՀ գրադարանի տնօրենին՝ միաժամանակ կցելով ուսանողական տոմսի վերականգնման համար կատարված վճարման կտրոնը:

8. Կորցրած կամ վնասված ուսանողական տոմսի վերականգնման վճարը սահմանել 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ: